Զբեհեղն, այսինքն ոսկի և կապուտակ և ծիրանի և սպիտակ ի միասին գործեալ։

Զշաղաշատեռն, որ է համակ կարմիր։

Զոսկէ ճամուկն, որ է փողփատ և օձիքն թզաչափ ոսկով կարած լինի։

Դարձեալ զոսկէ ճամուկն ալամ ոսկի, կարածի վերայ ուսին կամ որ զթեղնէ բերանն, ոսկի թելով կարեն լայն։

Զոսկէ տոռունն ստորոտն, ոսկի թելով կարած են լայն։

№ 73.

Գիրք ճարտասանութեան Մ. Խորենացւոյ որ երեք մաս բաժանուած է. ա. մասն նոտր գրով գրուած 450 էջ. որ կոչի —« Ցաղագս Աստուածային բացարձակ կատարելութեանց, այսինքն ստորոգելեացն»։ Բ. մասն բոլորագրով գրուած . . . « Ցաղագս Աստուածային գոյութեան և միութեան առաջին խնդիրք» որ կը բաղկանայ 270 էջէ. Գ-ն «Ցաղագս երկնային մարմնոց» 50 էջ։

Գրքի վերջն կայ մի ընդարձակ խրատաբանութիւն սկսեալ « Մովսէս քերթողի արարեալ պիտոյից տառի, խրատաբանութիւն յորդորական առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր. Ներակրթելւոջ ուշիմն վարժիւք յիմաստս ճարտասանութեան արհեստիս . . . . »

Աստի վերջ կայ յիշատակարան մի՝ « Գծագրեցաւ գիրքս ճարտասանութեան որ է արարեալ Մովսէսի Խորենացւոյ ձեռամբ անարհեստ և խաւարմած ոգւոյ. Սիմէոնի լոկ անուամբ և եթ քահանայի ի Թուին Հայոց ՌՃԴ և Է. և ով ոք հանդիպէք . . . . »

№ 58.

Գիրքս ութածալի դրիւք 400 էջէ բաղկացեալ է. ունի երեք բաժանում, որ իւրաքանչիւր բաժանում ևս գլուխներու բաժանուած՝ որոց վերնագրերն կարմիր տառերով և գեղեցիկ գրուած. Ա. բաժանումն է « Համառօտ հաւաքումն հոգւոյ և զօրութեանց նորին։»